

4.2. Զբոսաշրջություն

4.2.1. Միջազգային զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2010թ. հունվար-դեկտեմբերին հանրապետություն են ժամանել 683979 զբոսաշրջիկներ¹, 2009թ. նույն ժամանակաշրջանի 575281 զբոսաշրջիկների դիմաց կամ աճի տեմպը կազմել է 118.9%: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 640032 մարդ կամ 2009թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ ցուցանիշի աճի տեմպը կազմել է 121.6%:

Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ

	2009թ. հունվար-դեկտեմբեր	2010թ. հունվար-դեկտեմբեր	2010թ. հունվար-դեկտեմբերը 2009թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ
Հյուրանոցների քանակը , որոնք ընդունել են միջազգային զբոսաշրջիկների	43	50	116.3
Ժամանողներ			
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՁՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ ²	575281	683979	118.9
որոնցից տեղավորվել են՝			
հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում	65638	70209	107.0
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	509643	613770	120.4
Մեկնողներ			
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՁՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ ²	526193	640032	121.6
որոնցից ուղևորությունը կազմակերպվել է			
զբոսաշրջիկական կազմակերպությունների կողմից	11234	11031	98.2
ինքնուրույն	514959	629001	122.1

Ըստ հյուրանոցային տնտեսություններից ստացված հաշվետվությունների տվյալների, 2010թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ այցելած զբոսաշրջիկների 21.0%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, իսկ 79.0%-ը՝ ոչ ԱՊՀ երկրներին:

¹ Ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) մեթոդաբանության, «զբոսաշրջիկ» է համարվում ցանկացած անձ, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր՝ ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեն ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին: Ըստ նույն մեթոդաբանության, բոլոր ճանապարհորդները, ովքեր զբաղվում են զբոսաշրջությամբ, համարվում են «այցելուներ», որոնք էլ իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ «զբոսաշրջիկներ» (գիշերող այցելուներ) և «մեկօրյա այցելուներ» (առանց գիշերելու):

² Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք են հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալությունից, ինչպես նաև 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոսը ՀՀ ԱՎԾ, Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության (ԶԶՀ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (ՄՄՀՀ) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:

ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ու աճի տեմպը¹

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2009 թ. հունվար-դեկտեմբեր	2010 թ. հունվար-դեկտեմբեր	
Ընդամենը	100.0	100.0	107.0
այդ թվում՝			
ԱՊՀ երկրներ	18.4	21.0	122.3
որից՝			
Ռուսաստանի Դաշնություն	16.2	18.3	120.6
ԱՊՀ այլ երկրներ	2.1	2.7	135.1
Ոչ ԱՊՀ երկրներ	81.6	79.0	103.5
այդ թվում՝			
ԵՄ երկրներ	37.1	31.3	90.2
որից՝			
Ֆրանսիա	13.4	9.4	74.5
Գերմանիա	7.5	5.7	80.9
Միացյալ Թագավորություն	3.3	4.3	136.7
ԵՄ այլ երկրներ	12.8	12.0	100.0
Այլ երկրներ	44.5	47.7	114.7
ԱՄՆ	18.1	14.4	84.7
Իրան	7.7	10.4	144.1
Վրաստան	3.8	3.6	102.0
Թուրքիա	1.2	2.8	242.0
Կանադա	1.9	2.0	113.3
այլ երկրներ	11.7	14.5	132.6

Զբոսաշրջության ցուցանիշներն ըստ նպատակի

(մարդ)

	2009 թ. հունվար-դեկտեմբեր	2010 թ. հունվար-դեկտեմբեր	Տեսակարար կշիռը(2010թ. հունվար-դեկտեմբեր, %)
Ժամանողներ¹			
Ընդամենը զբոսաշրջիկներ	65638	70209	100.0
որոնցից, ըստ նպատակի.			
գործնական	25701	31171	44.4
հանգստի և ժամանցի	13086	15010	21.4
կրթության	-	19	0.0
բուժման	143	579	0.8
այլ	26708	23430	33.4
Մեկնողներ²			
Ընդամենը զբոսաշրջիկներ	11234	11031	100.0
որոնցից, ըստ նպատակի.			
գործնական	1136	528	4.8
հանգստի և ժամանցի	2335	3699	33.4
կրթության	4	6	0.1
բուժման	72	502	4.6
այլ	7687	6296	57.1

¹ Բերված տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում հաշվառված զբոսաշրջիկներին:

² Տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջիկական կազմակերպությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը: